



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Մտեղծագործական համայնքեր»  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

սրառման և տուրանել կուրք ցույնեցած ձևադրին կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առևտ կուրք ստեղծելու համար նոր

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material





ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲԵԱՆ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ  
ՔԵՐ

ՔԵՐ



891.99

4000 ₦

3-17 Հայոց բանակը

Հայոց բանակը

5m.

ԳԻՒՏԵ ՊՈՐԱԳԻ ՀՐ ԿՐԵԼ

ՊՐՈԼԵՏԱՐԻԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՈՅԻ ՄԻԱՅԵՐ

891.99

Հ-17

ՅԱԿՈԲ ՅԱԿՈԲԵՆ

ԽԱՂԱՔԻ Հ 1861 թ.

# ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԲԵԼ



Пролетарии всех стран, соединяйтесь!

АКОП АКОПЯН

РЕВОЛЮЦИОННАЯ  
ЭСТРАДА

Государственное издательство

1922

ՅԱԿՈԲԵՆ

ԴՐԱՋԱՆ

ՊԿՇԴԵՐԻ Պ


## ԵՐԿՈՒ ԽԾԱԳ

Բանուորական ակումբի ծագման հետ միասին մեծ պահանջ է զգացւում պրօլետարական պոկիայի հատւածների՝ բեմից արտասանելու համար։


Լոյս ընծայելով այս ժողովածուն, մենք ձգտել ենք համեստ շափով լրացնել այդ պակասը և անսահման ուրախ կը լինենք, եթէ գէթ մասամբ հասած լինենք մեր նպատակին։

Յ. Յակոբեան

Թիֆլիս, 1922 թ.



ՅԱԿՈՎ ՅԱԿՈԲԵԱՆ



## ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

*Տեսէլ ես, ընկեր, ալեկոծումը  
ահեղ ովկիտնի,  
Ուր երկու ալիք շարժուն սարի պէս  
իրար են վազում,  
Իրար են վազում փրփուրը բերնին  
յովազի նման  
Աւ յոխորտալով, զարնւում, փշուում  
աւազի նման...*

*Իսկ երբ անցնում է վրէժի բռուէն—  
յուզումը վայրի,  
Տեսէլ ես՝ ինչպէս հանգստանում է  
հսկան ջրերի,  
Մեղմանում է նա... մանուկի նման  
ժաղում է ալիք,  
Ալիքի միջից մի երգ անման,  
Ծփալով մեղմիկ—  
Շոյում լսելիք ...*

*Լոնէլ ես, ընկեր, ըմբռուտ երկնքում  
կոչը որոտի,  
Որ դղրդում է որովէս մի պայթիւն  
մեծ թնդանօթի.  
Տեսէլ ես, ինչպէս ամողերի կրծքին  
կայծակը զիգ զագ*

Իր լիգն է մխում փութելուտ, շեշտակի  
 ու ցնցում աշխարք.  
 Կամ ինչպէս թափով ծառու ծառու է լինում  
 ցասկոտ փոթորիկ,  
 Հոկայ ծառերին չոքէ չոք անում—  
 զարձնում խաղալիկ,  
 Մինչ որ տեղում է հեղեղը վայրուգ  
 և ինչպէս փրկանք.  
 Ծանր երկունքից ազատում աշխարք.  
 Բնութիւնը յաղթ ժողուում է ազա  
 պայծառ արեգին—  
 Որպէս պատասխան շար արհաւիրքին...

Խել ես, ընկեր, ծննդականի ճիշը  
 յուսահատ,  
 Որ գալարւելով՝ արգանեղի ցաւից  
 ովուայ անընդհատ...  
 Վիրաւոր ընկած այն եզ առիւծն է  
 այնպէս մանչում,  
 Երկունքի ժամին մեծ ազատութեան  
 ողնութեան կանչում.  
 Եեանքի և մանու պայքարը մզող  
 այն մայրն է առնջւող ...  
 Ինկ երբ համուում է յուսոյ քախտաւոր  
 ժամը փրկառէն,  
 Տեսէլ ես ինչպէս այդ խորհրդաւոր  
 մեն պայթումից յետ,  
 Մի զսեմ, խաղաղ մայրուկան ժողիս,  
 Որպէս վառ յակինթ,

Փայլում է նրա արնոտ շուրթերում —  
գէմքը զարդարում:

Այդպէս էր ահա և այն վեհ ժամին  
Յեղափոխութեան,

Երբ որ բաղիւեցին իրար հակառակ  
երկու ախոյեան.

Ալիքի նման խուլ մոլնչացին  
երկու հզօր ոյժ,

Աշխարհը ցնցւեց... ու եղան կործան  
կարգերը վատոյժ.

Վայրագ հեղեղին, շահթ ու փոթորկին  
Հետեւց թափով հեղեղ ցնծութեան,  
Երկունքի միջից մանուկը ծնւեց  
Մեծ ազատութեան.

Ընկեր իմ, ընկեր, ահա մանուկը  
Յեղափոխութեան.

Փորձութեան ժամին երդւիր կրծքովդ  
ոլաշտապանել նրան:

## Վ. Ի. ԼԵՆԻՆԻՆ

Խանդնել եմ ահա ովատկերի առաջ,  
Դիտում եմ նրա դժերը դէմքի.  
Սա հանճար է մի, թէ գօրավար քաջ,  
Որ ովաշտամունքը դարձաւ ամենքի:

Գանդը լեռո է լերկ, անհաս ու հպարտ,  
Ճակատը անհաշտ—կոփէների դաշտ—  
Խոր աչքերի մէջ այրող անապատ,  
Անողոք իրա հրով կուպաշտ:

Նայում է հեգնոտ անցած աշխարհին  
Եւ կարծեն ծաղրում հին բուրժուային.  
— Որքան էլ ուզես վեր կենալ նորից՝  
Դատապարտւած ես մահւան այսօրից.

---

## ՄԱՐԳԱՐԵ ԵՄ ԵՍ...

Մարգարէ, եմ ես...

Եւ զգօն հոգուս աչքով սրատես  
Թափանցում եմ խուլ հեռաւոր վայրեր  
Եւ երկրագնդիս անսահման ծայրեր։

Տեսնում եմ բնչպէս երկու ախոյեան —  
Թշնամի ոյժեր իրար գէմ ելած՝  
Կատաղի թափով իրար կխոյան,  
Որ տիրեն կեանքին, կամ ընկնեն մհամձ։

Մի տեղ բուրժուան, որպէս հիւծւած կին,  
Կուգէ յետ խրել իր փառքը նախկին։  
Պատնէշի այս կողմ ջահէլ կոմմունար  
Կուռմ է նոր կեսնք կոելու համար։

Եւ հեղեղի պէս արիւնն է հոսում,  
Ոչոք չի ժխտում կուփ գաղափար.  
Տարերըն են ճշուժ, լեռները խօսուժ՝  
— էլ վերադարձի շկայ ճանապարհ։

Եւ զեռ կուռմ է Ներսոսութիւնը  
Դահիճների գէմ — Աշխարհակալի,

Փողոց է իջել Արդարութիւնը,  
իր դասն է վարում յամառ, տիտանի .

Մարգարէ եմ ես... տեսնում եմ ինչպէս  
Դարերով ճնշւած, սորուկն արթնացած  
Տիրել է ուզում աշխարհին համայն,  
Աւ պիտի տիրի... Հալալ է նրան:

## ԱԻԵՏԵԱՅՑ ԵՐԿՐԻՆ

Այսօրից յետոյ մենք միայն մի տեղ  
Ունինք որբատեղ.

— Կարմիր Պետրոգրադ է Մոսկվան շքեղ.  
Սրանք են ահա, որ պիտի լինին  
Մեր Մեծ Հայրենիք,  
Մեր ծնողները և մեր ընտանիք.

Մոսկվա—Պետրոգրադ, դուք մեր աղբիւրը  
Ողեօրութեան,

Մեր որոնումի օրբանն առաջին,  
Կայանը վերջին.

Առաջապահ գունդ, հրդեհի ջահեր,  
Յեղափոխութեան,  
Մենք շատ ենք կռւել՝ ու գեռ չենք հասել  
Զեր թափ ու շնչին:

Ողջայն Պետրոգրադ և միշտ հրաշունչ  
Անպարտ Մոսկվային —

Իրենց շուրջերով, արւարձաններով,  
Ողջայն աշխարհիու երկու հակային —  
Իրենց դիւղերով, գաշտավայրերով  
Միշտ թարմ ու կանաչ,  
Այ հերոսների արիւնով ներկաւած.

ևս՝ ուխտաւորս գալիս եմ այցի  
 Զեր սուրբ վայրերին,  
 Ռւր հազարների արինը հոսեց  
 Եռմանաբների.  
 Դալիս եմ այցի... ինչպէս քրիստոնեան  
 Տանջւած դարերի,  
 Որ կերթար ուխտի Ետակոմբերին,  
 Ինչպէս արարը անձայր ու կիզող  
 Անապատների,  
 Որ կերթայ այցի իրենց սրբերի,  
 Փեղամբարների դամբարաններին.

Հեռու կովկասի հեռածայրերից,  
 Միլիոն սրտերի բարախումներից  
 Մաղկեփունջ հիւսած՝ իմ ուղին բացի,  
 Կարմիր Պետրոգրադ և այլ Մոսկվային—  
 Յեղափոխական երկու Հոկտեմբերին—  
 Գալիս եմ այցի...

---

## ՍՏԵՓԱՆ ՇՈՀՈՒՄԵԱՆԻՆ

Աչքերդ կապոյտ եթերի նման  
 Եւ հողիդ շուշան։ —  
 Սիրուդ խորունկ ծով. աղնիւ, անսման,  
 Բնկեր Շահումեան։  
 Զայնդ զանգակիւ վահու մի զօդանջ  
 Թափանցել զիտէր  
 Եւ ոգեսրել շեշտովն իր սքանչ  
 Վհատած սրտեր։  
 Խօսրդ չէր չոկ խօսք, այլ պատգամ հոր.  
 Կայծակինող ու վառ,  
 Թշնամիներդ դեռ մինչ այսօր  
 Քեզնից զօդահար։  
 Դու հօ չմեռար, նորից կեանք առար  
 Եւ յաղթ քո մահով  
 Ծլեց ու աճեց մի նոր գաղափար,  
 Սփռեց աշխարհով։  
 Մահդ խթանող ցնցեց շատերին  
 Մեր կուռ շաբքերում,  
 Օ՛, ել ու մի տես քա մարտիկներին —  
 Կուի զաշտերում։  
 Բայլում են ահա հաղար հաղարով —  
 Քո ճանապարով,  
 Եւ երգւում քո տեղ վրէժգ լուծել —  
 Ելն, զնաս բարով...

---

## ՄԵՌԱՆ՝ ԶԿՈՐԱՆ

Ի՞նչպիսի՞ հերոս ընկերներ մեռան,  
 Մեռան՝ չկորան...  
 Կրակն էր ցայտում նրանց աչք-ունքից,  
 Շանթը՝ շրթունքից.  
 Երբ խօսում էին ծով ամբոխի մէջ  
 Վիշտ ու կարիքից.  
 Վը է, ժի, ցասման հրով բորբոքւած՝  
 Նրանք ըեմ ելան  
 Եւ ըեմը գնարձու արիւնով ներկւած՝  
 Զօհերի սեղան.  
 Ի՞նչպիսի՞ հերոս ընկերներ մեռան...

Այսօր բանտերում, վազը աքսորում,  
 Միւս օր կախաղան  
 Հանելու համար, դահիճը դաժան  
 Կացինն էր սրում.  
 Բայց հերոսների շուրթերից սեղմւած  
 Նզովք չէր լսւում,  
 Բաժակն են ըմպում վերածնութեան  
 Սիւներին կախւած,  
 Ու հիմնը երգում Յեղափոխութեան՝  
 Հպարտ - չյաղթւած.  
 Ի՞նչպիսի՞ հերոս ընկերներ մեռան...

ՀԵՅ, ազատութեան անպարտ զինւորներ,  
Դուք որ անխռով.

Ներկեցիք փողոց ու գործարաններ  
Զեր տաք արխմով,  
Նոյն վայրում այսօր չահիլ ջիւաններ  
Բմբոստ շարքերով

Զեր գովքն են անում... ձեր թափւած արեամբ  
Սնւում, ամրանում...

Եւ անմաններիդ երդուում են անւամբ  
Ու հարստանում,  
Որ դուք, յիրաւի, պատւով, վեհութեամբ  
Զեր գործը տարաք՝  
Մեռաք՝ շկորաք:

---

ՔՍԱՆ - ՎԵՏ ԷՒՆ...

Քսան - վեց էին...

Նրանք առենքն էլ՝ ջահէլ ու եռուն,

Նրանք առենքն էլ նորաշունչ դարուն —

Փնջած մեխակներ — քսան - վեց ընկեր:

Իոխ էր զարկել

Անգղների գէմ Քսան - վեցն այն.

Իւ անհաւասար ու դիւցազնական

Այն մեծ կռէի մէջ զերի նա ընկել.

Ու մի առաւօտ,

Երբ աստղերը կաթ գեռ չէին հանգել՝

Ախշա-կայմայի դաշտում աւազաւ

Վեն Քսան - վեցին բերին կրակել.

Երկու - երկու շարք

Արձանի նման կանգնել են նրանք.

Գունատ ու հպարտ, լուռ են, չեն խօսում:

Արհամարհանքով մահին սպասում...

— Կացէք մի վայրկեան, —

Յանկարծ որոտաց ոև դահիճներին

Ծնկերն Շահումեան.

Երջանիկ ենք մենք, որ հիմա կընկնենք  
Երազած մահով ջահել ու վայել—  
Կոմմունարներին.

Բայց լաւ իմացէք, որ հենց իսկ վաղը  
Զեզ սպասում է խայտառակ մահը—  
Վայել շներին...

Մենք այդ լաւ գիտենք...

Երերաց մի ձայն... ու չանցաւ վայրկեան՝  
Գնացիրներից Քսան-վեցն այն  
Հնձած արտի պէս կող-կողի ընկան...

Գնացքը յետ գնաց...

Մինչ Քսան-վեցը իրարու գրկած՝  
Աղջա-կայմայի աւազու գոզում  
Ամեն լուսածէզ կոմմունարների  
Հիմն են երգում...



ԱՐԱՏԱԿՆԵՐԸ

Գալիս են, գալիս... նայէք այն ձորին,  
վերջ չկայ ծայրին,  
Գալիս են նրանք սև կմախըների ծով գլուխներով,  
Գալիս, փըրփըրում բիւր ալիքների  
հառաշանքներով:  
Նրանց բիրերը կախաղանների  
շւանից պայթած՝  
Նրանց կրծքերը համազարկերից  
ծակոտւած, ջարդւած՝  
Մէկի բերանից դեռ թարմ արիւնը  
կաթ-կաթ ծորալիս,  
Միւսի ճակատին վէրքի բերանը սև սեին տալիս—  
գալիս են, դարիս...  
Գալիս են նրանք և ամպերի պէս  
կուտակւում, դիզւում,  
վրէժ են ուզում...  
Նրանց բողոքից դահիճների դէմ  
քարերն են յուզւում.  
Ահոելի նրանց որոտումներից  
ցնցւում է երկինք,  
Հողմը նոր դադրած թերն է պարզում—  
գուժում փոթորիկ,  
Զգայուն ծովը թափով երազում—  
իններորդ ալիք.  
Եւ մինոլորտում ցասկոտ հրդեհի  
կայծը բորբոքւում,  
Հզօր, վիթխարի, անխուսափելի  
վրէժը կոփւում...

## ՊԱՀԱԿԸ

Թռղ կորչին ոգիք լքուն, վարանոտ, —  
Ես կանգուն եմ դեռ իմ դիրքի վրայ  
Եւ ինչպէս աղահակ մինչ լոյս առաւօտ  
Պիտի հսկեմ վէս բարձունքը նորա:

Եւ եթէ յանկարծ թշնամին կեանքիս  
Մթին անկիւնից մահաղաւ լարի՝  
Ոչինչ... կմեռնեմ ժպիտը դէմքիս—  
Նշան հաւատոյ գալիք յաղթ օրի:

Իմ յետքից կըդայ մի առողջ սերունդ—  
Ուժեղ և հպարտ իր նախորդներից,  
Փորձի մէջ բովւած մարտիկների գունդ—  
Դիրքը թշնամուց կփրկի նորից:

Եւ ստեղծագործ ոգեորութեամբ  
Ինչ որ կիսաւարտ մնաց սեր օրից՝  
Կտայ լրացում վեհ զիտակցութեամբ.  
Ողջայն ձեզ, Եղբայրք, ձեր նախորդներից:

---

ԱՐԲՈՒՆ - ԻՄ ԱՇԽԱՐՔԸ

Որքան էլ ուզեմ ձգտել դէպի ձեղ,  
Վեհապանծ սարեր,  
Ու փարւել մաքուր ձեր ձիւնեայ կրծքին,  
Որքան ուզեմ ես  
Սլանալ վեր, վեր,  
Արծիւի նման հաղարտ սաւառնել՝  
Էլի՛ չեմ կարող, կուսական լեռներ,  
Երկիրը թողնել,  
Որ խարխափում է կեղտ ու մաւրի մէջ,  
Տառապում անվերջ.  
Եւ ես կարիքի աշխարքն եմ ընտրում—  
Ճնշւած ու լքւած,  
Ուր վիշտ ու զրկանքն իրար հետ զրկւած։  
Մի ելք են փնտրում։

Եւ դուք, վաս աստղեր,  
Որբան էլ զիւթող,  
Սիրու պարուրող լինի ձեր հմայք,  
Որքան էլ գերէք հոգիս երազող  
Ու ինձ երկնային տանէք ձեր աշխարք՝  
Դարձեալ չեմ կարող.  
Կապւած եմ կամայ իմ մայք հողի հետ,  
Յար ու յարատե ամբոխի լացը,  
Յաւ ու կոկիծը

Ինձ կոչ են անում, թէ՝ արի, պտէտ,  
Մեր վիշտը լացիր,  
Մեզ ընկեր դարձիր:

Օ՛, ինչպէս քաղցր է երկինք վերանալ,  
Վիշտ, հոգս մոռանալ,

Լուսնի փայլի մէջ լողալ, սաւառնել,  
Աստղերը զրկել,

Բայց և անողոք իրականութեան  
Ուրւականը սե,  
Թրպէս մի ժանտ դկ,

Մարմնացած ըմբոստ բողոքի նման —  
Տալիս է հրաման.

Եջիր երազոտ երկնային դահից  
Լեանքին մօտնալու,

Նրան երդ ունիս, վէրք ունիս տալու:

Ու պիտի իշնեմ... ամբոխից փախ տալ  
Դժւար է, դժւար.

Հոգիս ձուլւած է նրա հոգու մէջ,

Զղերս կապւած նրա ջղերին,  
Մի այլ ճանապար

Գոյութիւն շունի երբէք ինձ համար:

Եւ որքան դիւթող լինի ձեր հմայք,  
Երկինք ու աստղեր,

Կայ մի քրանալի, կարիքի աշխարք  
Ճնշւած ու լրւած՝  
Նրան եմ ընտրում,

Այստեղ վիշտ, զրկանք իրար հետ զրկւած՝  
Մի ելք են փնտրում...

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՐԳԸ

Մի երգ գիտեմ ես աննման —  
Հզօր մուրճի թափի նման,  
Որոտի պէս հատու, խրճիտ  
Մի երգ գիտեմ ես աննման:

Ծնւել է նա մութ հանքերի  
Մետաղակուռ երակներից  
Ու ձայն առել թլունգների  
Ցասկոտ ու շեշտ հուր-զարկերից,

Մնունդ առել, ջիղ ու արիւն՝  
Բանուկ, ուժեղ բազուկներից.  
Գործարանը խանդ ու աւիւն  
Ծնչել նրան իր ժխորից:

Հմայք ունի երգս այնպէս,  
Հոգսի ժամին թէ որ երգես՝  
Թախիծ ու վիշտ կչքանայ —  
Լքւած հոգուն նեցուկ է նա.

Հէյ, իմ երդը միշտ աննման —  
Հզօր մուրճի թափի նման,  
Որոտի պէս հատու, խրճիտ —  
Մի երգ գիտեմ ես աննման.



## ԼՈՒՍԱԲԱՑԻՆ

Նորից եկայ այցելութեան  
Գործարանի պարիսպներին,  
Երկաթակուռ այն շէնքերին,  
Որոնք մի օր շունչ տւեցին իմ երդերին:

Ահա մտայ նրա շէմքով —  
Ինձ ողջունեց արթուն սուլիչ  
Մեքենաներն ուրախացած  
Ու խենթացած՝ արձակեցին երկաթէ ճիչ:

Իրար անցան ճախարակներ,  
Ժիր փոկերն ու սլըտուտակներ,  
Շոգեմուրճը հպարտ թնդաց  
Ու որոտաց՝ զեռ չեմ յոգնել, զեռ չեմ յոդնել:

Նրան խմբով ձայնակցեցին  
Չարանձի հազար մուրճեր.  
Ծըլվըլալով զըրընգացին,  
Կըլկըլացին՝ որպէս ուրախ դեղձանիկներ:

Եւ այս ժխոր-համերգի մէջ  
Մեծ ըուրայից ժայթքեց ոստնում.  
Այդ անհանգիստ կայծն էր անշէջ —  
Առաւօտեան՝ նոր կեանքի երգն էր պատ-

---

րաստում:

## ՀԱՄԵՐԳ

Երգենք, ասացին ճախարակները,  
 Մութը չքանում, լոյսն է մօտենում.  
 Այս երգերի մէջ սիրտն է ամրանում,  
 Երգենք, մռացւին ծանր հոգսերը:  
  
 — Կացէք մի վայրկեան, — շշնջաց կաթսան, —  
 Ազդանշան տամ՝ երգեցէք յետոյ.  
 Եւ շոգի հանեց իր խողովակից  
 Ու մի զիլ սուլոց թողեց երակից:  
  
 Նրա սուր կոչից անիւը հսկայ  
 Ծոյլ, քնաթաթախ շարժումի ընկաւ.  
 Իսկ իր ետքից էլ զլանակները,  
 Աշխոյժ հոլերն ու ճախարակները:  
  
 Եւ խիստ, համաշափ շեշտ ու թափի մէջ  
 Խռում էր խրոխտ, ներշնչւած մի երգ.  
 Մեքենավարն էր, աշխատանքի հետ  
 Աւրախ, եռանդուն կազմել էր համերդ:

---

## ԴԱՐԲՆԻ ԵՐԳԸ

Զարկ, զարկ, ընկեր, մեզ բաղդ կռենք —  
Թող գողգողայ մեծ սալը.  
Շանթի տարափ մեր շուրջ վոհենք —  
Լուսաւորւի աշխարհը:

Մենք բնութեան առողջ զաւակ՝  
Քրտինք հեղենք — սև արիւն,  
Զլուտ բազկով ճարենք վաստակ —  
Մօհտաջ շինենք թշնամուն:

Զարկ, զարկ, ընկեր, էլ կանգ չառնենք,  
Մօտ է ահա լաւ օրը...  
Այնպէս թափով սալին դարնենք,  
Որ գողգողայ աշխարհը...

## ՀԵՒՈՒՄ ԷՔ ՈՒ ՏՆՔՈՒՄ...

Հեռւմ էք ու տնքում, հառաջում ու լացում,  
 Աև հողի շերտերի – հանքերի տակ տքնում.  
 Իմ երգի հերոսներ – տանջանքի մարմնացում –  
 ... Որ երբէք չէք յոգնում, չէք յոգնում...

Երկաթն է, գալարւում ձեր ջղոտ ձեռքերում,  
 Պողպատը խոնարհուում, դողդողում ու կըւում,  
 Աշխարհիս ծանրանքը ձեր սրտում, ձեր հոգում –  
 ... Եւ սակայն չէք յոգնում, չէք յոգնում...

Նոր կեանքի արշալոյս, Նոր Ուղի հարթողներ,  
 Միշտ շարժուն, ստեղծող, յարաձնւն, աննկուն.  
 Աշխարքիս զարդարանք, հիացքի կոթողներ –  
 ... Որ երբէք չէք յոգնում, չէք յոգնում...



«ՆՈՐ ԱՌԱԻՈՏ» պօէմից

(Հատւած)

VII.

Գնանք գործարան...

Բայց լսիր ասեմ, սիրելի ընկեր,

Որ չկան այնտեղ ծառ ու ծաղիկներ,  
Բաղեղ ու խոտեր,

Հաւքերի նւազ, զուլ-զուլ աղբիւրներ,  
Եւ ոչ ալ վարդեր.

Չես տեսնիլ այնտեղ լուսնեակ գիշերի  
Լուսաշաղ ամպեր,

Ոչ էլ սիրահար ջահէլ արեի  
Կրբոտ համբոյրներ.

Այնտեղ ծառի տեղ ցցւած են խրոխտ  
Երկաթի սիւներ,

Բաղեղ խոտի տեղ ցանցերի փշոտ  
Պողպատի լարեր

Գեղախօս թռչնոց երգի փոխարէն  
Կըլսես այնտեղ

Ճախարակների ոնդային որոտ

Եւ խենթ փոկերի համերգը՝ ահեղ.

Այնտեղ խեղդւում են շոգու ամպերէն,

Պաղ աղբիւրի տեղ քրտինք ամեն օր,  
Վարդի փոխարէն

Ծորում, քամւում է արիւն սրտերէն  
 Եւ շուրջը բոլոր  
 Շոբնդ ու ժխոր...  
 Կրտեսնես ինչպէս թանձրացած մխով  
 Շինելոյզները  
 Երկինք են ցցել աղաճ երախով  
 Մըռոտ պնչերը,  
 Կարծես հրաշունչ վիշտապի նման  
 Ուզում են շնչել  
 Ու իրենց քարշել  
 Անհօւն բարձունքից փայլուն աստղերը,  
 Որ նրանց թաղեն մշուշ-ծխի մէջ:  
 Կըտեսնես շարւած սգաւոր ու խեղճ  
 Արհեստանոցի աղիւս-պատերը  
 Խոնաւ ու թաց-թաց,  
 Կարծես բանւորի քրաինքով թրջւած .

## VIII.

Եւ դու կըմանես այն գործարանի  
 Կամարների տակ,  
 Որտեղ եռում է թափով աշխատանք.  
 Կըտեսնես այնտեղ արհեստանոցի  
 Հարազատ զաւակ կաղնի բանւորին,  
 Կարծես կարիքը նստել է նրա  
 Կորացած մէջքին:  
 Ախ, շատ եմ տեսել նրան, իմ ընկեր,  
 Սեացած երես, ծխի մէջ կորած,  
 Ու դեռ հասակը երեսուն չառած՝  
 Կամ մեքենան է ճխում իր թաթում,

Առքերը փշրում, բազուկը հատում,  
 Կամ ալ հեղուկը այրում, փոթոթում:  
 Ես տեսայ նրան, սիրելի ընկեր,  
 Մի մթին զիշեր  
 Քուրան էր վառւում, փնչում կատաղած  
 Ամեն անկիւնից որպէս վիշապներ,  
 Կարմիր կրակը լեզուներ հանած՝  
 Օդը լիզելով երկաթն էր ծամում,  
 Ծուփ. ծուփ շիկանում,  
 Եւ նրա զիմաց դարբինը կանգնած,  
 Ալ բոցի գոյնից թափ, եռանդ առած՝  
 Չորցած մատներով երկաթն էր կռում  
 Եւ պողպատ մէջքով յամառին ծռում,  
 Կռում ու կռում...  
 Եւ մինչ մի նոր ձե, մի կեանք չէր տալիս  
 Անշունչ մետաղին—չէր հանգ տանում:  
 Եւ խորհում էի... ահա թէ ուր է  
 Չգտում բանորի ստեղծող ողին,  
 Ահա թէ ինչու կարմիր ալ գոյնը  
 Նա սիրեց այնպէս խանդաղատաղին.  
 Ու թէ կաթ-կաթ քրտինք է, ծորում  
 Մըրոտ ձակատից,  
 Բայց էլի մի գործ, մի իր է ձուլում  
 Անշունչ երկաթից.  
 Մի գործ հոյակապ,  
 Որով կոփուռմ է իր կամքը երկաթ,  
 Անւում ու բովում հաւատըն անյաղին:  
 Մի ուրիշ անգամ այդ տիտաններին  
 Ես տեսայ, ընկեր, մեծ ձուլարանում.

Դոյլեր ու ձողեր ձեռքերը առած՝  
Եռուն հնոցի շուրջը բոլորած՝  
Թուջ էին հալում,  
Կաթսան ամենի կարմրել էր, փափկել,  
Ուզում էր ոլայթել...  
Եւ ահա մէկը անվեհերներից  
Սուր ձողը ձեռքում  
Կաթսայի կուրծքն է զայրոյթով մխում,  
Երակը խայթում.  
Կարմիր հալոցքը աբիւնի նման  
Վիժում է ուժգին,  
Կարծես յօխորառում կլանել նրան,  
Ով որ խիզախեց վէրք տալ իր կրծքին.  
Բայց բանւորը քաջ սովոր է նրան,  
Ծաղրում է, հեզուում ջեռուն հեղուկին.  
Հալոցքի մէջ է սնւել, մեծացել  
Նրա յաղթ հողին:

xi

Այդպէս շարժւելուն նրանք միշտ սովոր,  
Այդպէս անհանգիստ, եռուն ամեն օր  
Գալիս են անվերջ՝  
Հազարը մէկի պէս, մէկը՝ հազարի  
Մի ալիքից յետ՝ բիւրաւոր ալիք՝  
Չուլում է ես-ը հզօր մենք-ի մէջ  
Եւ մեռած կեանքի յուզում փոթորիկ:  
Նրանք գալիս են արդարութիւնը  
Ուսուցանելու,

Նրանք պայթարում ողջ մարդկութեանք  
Հանգիստ բերելու,

Նրանք տանջւում են ոչ ինձ, քեզ, միւսի,  
Չորբորդի համար,

Նրանք մեսնում են ինձ, քեզ, երրորդի—  
Շատերի համար,

Եւ հսկայական մի ցաւով տարւած  
Զգուում են առաջ, անցնում խութերից

Եւ սիրոն է թնդում այդ միութիւնից.

Տես, այդ նրանք են, ուր ամեն մէկը

Մի քար է քաշում մրջիւնի նման

Ապագայ շինքի կռելու հիմքը,

Ու երբ տեսնում է պատերը ելան,

Ելան բարձրացան և գործն է կենդան

Ոգեորւում է առիւծի նման:

Գհանք գործարան,

Հոգսի, կարիքի, քաղց ու տանջանքի

Այդ շտեմարան.

Այստեղ իը տեսնես զրկանքի որդուն,

Ուր ինքն աշխատում, ուրիշն է ուտում.

Այստեղ կարող ես հասկանալ մարդուն,

Լւանալ վէրքեր որտիդ արիւնով,

Հրեշտակային այդ բարի դէմքով,

Քնքուշ, նրբազգաց կանացի հոգով

Այստեղ կարող ես ցաւեր ամոքել

Եւ վհատեալի սիրութ բորբոքել,

Որ լքման ժամին

Վշտին դիմանալ նա կարողանայ,  
 Մինչ մի լաւ օրի նա կըմօտենայ-  
 Թռեցիր նրան, այ իմ սիրելի,  
 Տանջւիր նոյն ցաւով.  
 Նա ով շատ տանջւում  
 Ամենից լաւ է կեանքը հասկանում...

---

## ՓՈԹՈՐԿԻ ԵՐԳԸ

(Հասւած «ԽՈՐՄԻՑ Ա.Լ.Ի.Ք.» պօեմից)

Մտայ այստեղ փոթորկելու ձեր սըտերը,  
Վրդովելու ձեր անզորը խաղաղ կեանքի.  
Մտայ այստեղ սասանելու փուտ հիմքերը  
Նեխւած ու դարշ ձեր հին շէնքի.

Դէհ, վեր կացէք, ով քնած է մեռածի պէս,  
Ով չէ ուզում, որ կուլ գնայ այս հոսանքին.  
Դէհ, վեր կացէք, ով ուժ ու թափ ունի ինձ պէս,  
Ով չէ ուզում կեանքը զոհել Մեծ փորձանքին.

Լսում էք դուք, ահա այնտեղ որոտն է հաս  
Եր սուր լիզը երկրի կրծքին մխում թափով.  
Յասումով լի երկնած ոզու վրէժն է այս  
Երկնած ցաւով ու սարսափով:

Դէհ, վեր կացէք, ով քնած է մեռածի պէս,  
Ով չէ ուզում, որ կուլ գնայ այս հոսանքին.  
Հէյ, վեր կացէք, ով ոյժ ու թափ ունի ինձ պէս  
Եւ ծով կարօտ այցի դալու նոր Աշխարքին:

## Է Տ Ա Պ Ը

(Հաւատած «ԿԱՐՄԻՐ ԱԼԵՔ» պօեմից)

Թև-թեփ կապւած, կող-կողի հպած  
Եւ քայլում էին, և նայում առաջ...  
Ամառ էր օրը, փոշու մէջ խեղզւած՝  
Բայց խրոխտ ու յաղթ և քայլում էին,  
Եւ նայում առաջ:

Եւ կայլակներով քրսինք էր ծորում  
Բաց ճակատներից, ուարանոցներից,  
Եւ տապ հողի մէջ ծացիկ էր ծլում  
Ամեն մի կաթիլ գետին գլորւող  
Քրսինք-գոհարից

Շատ գնացին, քիչ՝ հողաբու, չպարտւած՝  
Նրանց կրծքերից չլուեց հառաչ.  
Վերջը կանգ առան Մեծ լեռան զիմաց,  
Բայց նրանք դարձեալ կարմիր ալիքով  
Սուրում են առաջ...

---

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԱՐԱՏԻ Ջ

«ՀԱԻԱՍԱՐՈՒԹԻՒՆ» պօկմից

IV.

Եւ ես հէքեաթի շեմքին խոնարհած՝  
Հիանում եմ լոկ այս նոր աշխարհով,  
Մի աշխարհ չքնաղ, որ ալիք առած՝  
Ծփում է, շարժւում, որպէս եռուն ծով.  
— Էյ, հազար, հազար աւտօմորբիդներ,  
Որ այդպէս արագ թռչում էք, սլանում,  
Ո՞ւմ էք պատկանում.

— Հանրապետութեան...  
— Էյ, հազար, հազար լոյսեր էլեքտրեան,  
Որ գիշերները արև էք վառում,  
Ո՞ւմ էք պատկանում.

— Հաւասարութեան...  
— Եւ դուք, աշխարհի գեղեցկուհիներ —  
Յաղթ մեքենաներ ու գործարաններ —  
Որ քար ու հողից բարիք էք ծնում,  
Ո՞ւմ էք պատկանում.

— Բանուոք մարդկութեան...  
— Դուք նաւեր, ջրեր, երկաթուղիներ,  
Հանքեր ու ցանքեր ազատ աշխարհում,  
Ո՞ւմ էք պատկանում.

— Հանուր մարդկութեան...  
— Համայսարաններ, աստղեկայաններ,  
Չքնաղ թատրոններ, հանճարի աներ,

Ար այս հեքեաթի պարծանքն էք կազմում,  
Ուստի էք պատկանում.

— Մէկին, ամենքին — իրար հաւասար —  
Ար հազարն է մէկ՝ և մէկը՝ հազար՝

## V.

Տեսէլ էք, արդեօք, վաղ արշալուսին  
Նորածին կանաչ ցողը երեսին,  
Կամ ծովեթերում լուսաշաղ ամպեր,  
Անրիծ, անաղարտ, ինչպէս կարազներ-  
Կանաչների մէջ և վարդերի մէջ  
Ես աեսայ այստեղ մի աւան սիրուն,  
Քաղաքից հեռու շարէշար անվերջ  
Միայարկ աներ — շուրջը ողջ գարուն.  
Տները այստեղ բիւրեղից է ողջ,  
Հոյլերի հեղեղ, արևն ընտանի,  
Այստեղ ծլում է մի սերունդ առողջ  
Եեղ մանուկների.  
Ինչպէս միաձեւ ու պարզ են հազնւած  
Այս գաւակները նորեկ Աշխարհի,  
Եւ ինչպէս սիրով և ինչպէս ազատ,  
Աղջիկ ու աղայ իրար հարազատ,  
Կարծես ամենքը մի մօրից ծնւած,  
Մի օր մեծացած ու մի տեղ սնւած,  
Խաղում են կայտառ, ծրվում սրանց,  
Դախանձ, չարութիւն օտար է նրանց,  
Երգում են, որպէս գարնան թռչուններ,  
Աչ ոք նրանցից հազս ու ցաւ չունէ...

Սակայն ինչու այս գեղ ծաղկանոցում—  
Բնութեան ծացում—

Տեղակ վիթթել են ծաղիկ հասակներ  
Պատանիների.

Ծաղիկ հասակներ, ինչորէս պատակներ,  
Ար շուք են տալիս գաշտերի միջին  
Թաւիչ կանաչին.

Ովքեր են սրանք, ինչու են այստեղ,  
Այս մանկանց միջին:

Նորիկ Աշխարհի օգակներն են այն  
Համերաշխութեան,

Ար ամեն անզամ իրենց հմտութեամբ  
Օգնեն, աջակցեն դեռ ևս անփորձ  
Այս մանուկներին.

Օգնեն, աջակցեն և ուսուցանեն  
Մէկը ամենքին,

Ար այս հասակից մատադ սրափ մէջ  
Հաւասարութեան և Եղբայրութեան  
Զարդանայ ողին:

V).

Ահա և նրանք՝ զործարանները  
Նոր սերունդների,

Ահա և նրանք՝ ստեղծողները  
Այս նոր Աշխարհի.

Հոյակապ, սիրուն, ողջը սպակեայ—  
Լոյսերի աղբիւր,

Յատակը յղկուն, հարթ, ճենապակեայ,  
Օդը համասփիւռ.

Մտել եմ նրա կամարէ, դո՞նով—  
 Նման տաճարի,  
 Այստեղ է ծնւել, այստեղ սաւառնում  
 Ողին հանճարի...  
 Ահա և նրանք ճախարակները  
 Զուգահեռ շարքով,  
 Որպէս տիտաններ՝ մարմար հիմքերին  
 Բազմել են կարգով.  
 Գործում են թափով, մըրկում արագ,  
 Տենդային հեքով  
 Եւ լսելիքդ շոյում միանւագ  
 Ցաղթական երգով.  
 Այստեղ չէ լսւում առաջւայ նման  
 Շորինդ ու շառաչ,  
 Ողջը խոնարհւել, ողջը զսպւել է  
 Հանճարի առաջ.  
 Եւ մարդու համար մեքենան անսաս  
 Մի զսպւած գագան,  
 Որ ինչ ուղղութիւն և ինչ ընթացք տառ  
 Կըլսի անձայն:  
 Օ՛, գիտակցութիւն,  
 Որ խենթ մեքենան  
 Դարձել է խոհուն ընկերը մարդկան:  
 — Ներդաշնակութիւն,  
 Որ աշխատանքի ժամերին անգամ  
 Լարւած ջղերին հանգիստ է շնչում:  
 — Զորս ժամ աշխատանք,  
 Ուր մարդն է խոյում յաղթանքից յաղթանք.  
 — Հաւասարութիւն,

Որ այս համերաշխ աշխատանքներից  
Օգտում է համայն հասարակութիւն,  
Ազրում իրենի, ընկերի համար —  
Իրար հաւասար,  
Ուր հազարն է մէկ և մէկը հազար։

## VII.

Բարդ մերենայի խօնարհ սպասում  
Բանւորն է կանգնել  
Եւ հում նիւթերից թելեր է հիւսում —  
Զիւների լեռներ.  
Մի բողէ, վայրկեան, մի արագ պտոյտ  
Եւ հիւսերը այն՝  
Այլ մեքենայի տեսնում ես կոյտ-կոյտ  
Ուսերը ելան.  
Ճարպիկ մեքենան բերանն է առնում  
Թելերի խուրձեր,  
Ծամում, կլանում և կրծքից հանում  
Պատրաստի գործեր.  
Նրա հարեան մեքենայի ճաղն  
Վրայ է հասնում,  
Եւ քուլա-քուլա գործւածքը շարմաղ  
Ծալում ու դարսում.  
Ծալում, վաթաթում քաթանի հակեր  
Պողպատ մատներով,  
Եւ շտագ հասցնում այլ բաժանմունքներ  
Վագօնետներով...  
Այստեղ է ահա, որ կեանք է առել  
Մի ուրիշ աշխարք,

Գործում են հազար ժիր մեքենաներ —  
 Մեղուների շարք.  
 Եւ ամեն մէկը ճերմակեղենի  
 Մի մասն է ձեռւմ,  
 Կարում ու հարթում խելացի, զգասա  
 Եւ՝ զործը պատրաստ  
 Եւ աշխատանքը, որ բեռ էր առաջ,  
 Զրկանք ու առնջանք՝  
 Այժմ դարձել է նոր մարդու համար  
 Հոգու զւարձանք.  
 Մարդ ու մեքենայ սիրով, հոմերաշնուր  
 Գործում են ուրախ,  
 Կռում ու կոփում նոր սերունդների  
 Ապագան շքնաղ...  
 Եւ այս ամենը դարձեալ իրենի —  
 Ընկերի համար —  
 Իրար հաւասար,  
 Ուր հազարն է մէկ և մէկը՝ հազար:

---

## ԿԱՐՄԻՐ ԳԱՐՆԱՆ

— Ապրել...

— Ապրել միայն կարմիր գարնան,

երբ ջրերն են իրար խառնում —

զետեր գառնում,

երբ կանաչն է հասակ տռնում —

փարթամանում

Ապրել միայն կարմիր գարնան:

— Կռւել...

— Կռւել միայն կարմիր գարնան,

երբ որոտն է անեղ թնդում,

երբ կայծակն է երկինք քանդում,

եսիւների բացում քաօս,

Տարերքների խօլ ովկիանոս:

— Մեռնել...

— Մեռնել միայն կարմիր գարնան,

երբ հեղեղն է լեռներ խոցում,

երբ սելաւն է ուղի բացում, —

Ինչ կայ անտետք՝ տաճնում իր հետ,

— Անցած կեանքի էլ չկայ հետք...

## ՄԱՔԱՐԴՄԱՆ ԺԱՄԻՆ

Մուրճը ձեռքներիդ մաքառման ժամին,  
Որտու ու թափով գարկեցէք սալին.  
Առանց վարանման, կայծակի նման  
գարկեցէք արագ՝  
Քանի չեռուցած երկաթին է տաք-տաք:

Եւ վայ է նրան, ով այս վեհ ժամկին  
Եւ կը վարանի, և կը թուլանայ.  
Ով իր ձեռքերի կոշտերի վրայ  
յոյս չի ունենայ:

Մուրճը ձեռքներիդ պատրաստ միշտ մնայ,  
իսկ ով մաքառման գեռ չէ ընդունակ՝  
Շարքերի միջից թող անհետանայ.  
Թոյլերի չէ տեղ, ոչ գործը կատակ...  
Դէհ, զարկենք, քանի երկաթն է տաք-տաք:

## ՄԱՅԻՍ - ՄՀԿԵԱՆ ԵՐԳ

Գարնան անդրանիկ այս ուրախ օրին  
 Դուրս ելէք խումբ-խումբ, բանւոր ընկերներ,  
 Եւ ողջոյն տալով դաշտ ու ձորերին,  
 Երգէք ձեր աղատ, տօնական երգեր.

Գոռ արձագանքը ձեր յաղթ երգերի  
 Թող սարսափ ազգի թշնամու սրտին,  
 Թող ցնցի հոգին բռնաւորների,  
 Հանգիստը խլի ճնշող հարրատի.

Եւ թող խլանայ ձայնը բռնութեան —  
 Աղմուկ շրլաւի գործարաններից.  
 Այսօր մեր տօնն է վեն զիտակցութեան —  
 Թող պայթի աղան յամառ դայրոյթից.

---

## ԵՍ ԶԵԶ ԱՍՈՒՄ ԵՄ...

Ես ձեզ ասում եմ, կդայ այն օրը,  
Երբ իրաւագուրի ամեն մի բանւոր  
Իր աշխատանքի կրառնայ տէրը  
Ու ազատ, անհոգ կապրի բաղդաւոր:

Նենդաւորների դժնդակ սրտից  
Կիրը մարդկային կը կորչի անհետ,  
Կը լոի ես-ը շանթւած ամօթից  
Եւ գային ու գառը կապրեն իրար հետ:

Ու էլ չի տիրիլ անարդ ստակը,  
Մարդուն մարդու դէմ չի զինիլ անվերջ.  
Ամբիոն կելնի հալալ վաստակը,  
Իրար յօշոտող կռւին կտայ վերջ.

Ես ձեզ ասում եմ... մօտ է այն օրը...  
Թող ստրուկներին թւայ այդ երազ,  
Նրան կհամնի կռւող բանւորը –  
Մարտնչողների է դա հէզ մուրազ:

to u 2 u p c

Ահա բաղաքը... հսկայ բուրգերի  
մի զանգւած է, այն,  
թէ միապաղադ պողպատից ձուլւած  
լեռների շարան,  
ուր թրամների, հեռախօսների  
ցանցերը անխռնչ  
Շարժի են բերում, աղմկում կեանքի  
երակները ողջ:

Ահա փողոցը... մէջ, երկար ու լայն -  
պետի է նման,  
Աւը ոլորտներով ծփում է, եռում  
հսսանքը շարժման  
Եւ աւը վիթխարի շէնքերը քարէ  
երկնահուալ շարքով  
Կապոյտ մի ձամալայ եզրիկ ևն վերից  
անհռչն լազուրքով:

Այստեղ ցուլի պէս բառանչում է, անս,  
կառքը ինքնաշարժ,  
Այստեղ աղմկում հանրակառերը,  
թրամաները վարժ,

Սրանց արանքից ծիծեռնակի պէս  
սուրում են ճարպիկ  
Հեծանիւները՝ շալակն առած  
լին, տղամարդիկ...

Եւ այս ամենը, և կառք, և թրամ  
վագքով խուռներամ  
Հզօր, դիւթական գաղտնի մի ձեռքով  
ալիքանման՝  
Պտոյտ են գալիս, որպէս համաչափ  
թէմպը սլաքի,  
Ու չեն խանգարում թանչը քաղաքի,  
հերը քաղաքի:

Եւ զո՞ն է այսուեղ մարդը այսօրւան—  
ոյժի ու փառքի,  
Որ այս ժխորում ծծում է առողջ  
հիւթերը կեանքի,  
Ծծում է, քամում բոյր ու հրապոյր,  
յափրում, արբենում,  
—Ու չէ յագենում... ու չէ յագենում...

Օ՛, այս խնճոյքի ոլորտումներին, լոյս փո-  
ղոցների հնչիւն երգերին  
Անմաս է միայն ստեղծողն այն,

Որ շնոք է ուել նրա վերամբարձ բաղմա-  
յարկերին,  
Ինըը մնացել մոռացւած, մենակ,  
որպէս խորթ զաւակ:

Եւ բանակ դրած քաղաքածայրում —  
որպէս զոռ ալիք,

Այստեղ ձուլւում է զօրծարաններում  
սերունդը գալիք.

Օ՛, հետեցէք նրա փոթորկող  
սըտի բարախման,  
նա էլ իր խոհերն, իր յոյզերն ունի,  
իր գերնպատակ,  
Որի ծովթափին չի դիմանալու  
ոչ մի ամբարդակ ...

Փարիզ

## Ս Ե Յ Ֆ Ե Ր Ը

Դրամատան ներքին յարկում մռայլ ու դաժան,  
Աւը մտնելուց սառնութիւնն է երեսիդ զարկում,  
Արկղների կայ պողպատէ չորս պատէ շարան,  
Ժանտ ու դաժան, մութ, անհամբոյր

Այն ներքին յարկում:

Պողպատէ այն արկղներում ոսկին է զնգում,  
Հազար միլիոն, միլիոն հազար գեղնազոյն ոսկին.  
Մւմ քրաինքն է, ծւմ արիւնն է

Այնուեղ հեկեկում...

— Ամեն երկրի բանւոր մարդկանց

Եւ ամեն ազգին

Շահագործող հարուստների թալաններն են այն,  
Ար բերել են զրամատուն պահ տալու այնուեղ.  
Անազահով է իրենց տուն—վախ կայ դողանան,  
Գողը գողից է վախենում տանը, ամեն տեղ:

Եւ ամեն օր խորհրդաւոր այս մթին յարկում  
Զոյգ բանալիքն են զըրնզում—իրար ստուգող.  
Գալիս, զնում երկու սեռից ոսկու հետ խազում,  
Բերում, տանում, անհետանում —

Գող՝ ու սիրոբ դող...

## ՕՏԱՐՆ ՈՒ ՀԱՐԱԶԱՏԸ

Հետաքրքիր մարդուն մէկը  
                  պտութ գալով շուկայում,  
 Պահ մի կանգնեց խանութի մօտ  
                  արծաթագործ վարպետի.  
 Այստեղ մուրճի զարկերի տակ  
                  արծաթըն էր հեկեկում  
 Եւ վարպետի ռւժեղ ձեռքում  
                  գալարւելով, տափակում։

Անցաւ մարդը մի այլ խանութ  
                  ու կանգ առաւ նրա մօտ.  
 Ոսկերիչն էր թեթև մուրճով  
                  ոսկին ծեծում եռանգուտ.  
 Նրա փափուկ զարկերի տակ  
                  համբ, թեթև տնքալով,  
 ♦այլ ոսկին էր խուլ հառաջում,  
                  արտասուքը կուլ տալով։

Թողեց նրան, անցաւ մարդը,  
                  դարբնոցի մօտ կանգ առաւ,  
 Ուր երկաթն էր կռանի տակ  
                  աղմկելով բողոքում։

Հսկայ թափով իրար յետքից  
 հարւածելով մեծ մուրճը,  
 Յորդ արցունքի — շանթի տարափ  
 էր հեղեղում իր շուրջը.

Ու անցորդը դարձաւ նրան,  
 այսպէս հարցրեց երկաթին.  
 «Ասա, եղբայր, է՞ր արծաթը  
 արտասւում է կամացուկ,  
 Ոսկին՝ քնքոյշ այդ մետաղը,  
 դիմանում է իր վշտին,  
 Մինչ դու—կոպիտ, ոև մետաղգ—  
 այդպէս դժգոհ վիճակից՝  
 Ասես ցաւդ ուժեղ լինի  
 քնքոյշ ոսկի — արծաթից».

— Այս, ճիշտ է քո ասածը,  
 պատասխանեց երկաթը,  
 Բայց զգում եմ աւելի ցաւ,  
 քանց ոսկին ու արծաթը.  
 Մինչեռ նրանք ծեծկըւում են  
 իրենց օտար մետաղից,  
 ես հարւածւում, մղկտում եմ  
 իմ հարազատ եղբօրից.  
 Զկայ մի բան այս աշխարհում,  
 աղնիւ պարոն, ցաւալից,  
 Թանց այն, երբ մարդ ծեծկըւում է  
 իր սեպհական կտորից.

---

## ԵՍ ԱՅՆ ԵՄ ՍԻՐՈՒՄ

Է՞ն որ կիսահալ սառոյցի տակից  
Ժիր վտակներն են ի հե լողում,  
Է՞ն որ ձիւների վերջին հալոցքից  
Թաւիշ, աղւամազ կանաչն է շողում,  
Է՞ն որ արևի կենսատու շողքից  
Գարնան առաջին ծաղիկն է ծլում  
Եւ մանուկի պէս արթնացած քնից  
Աչքերը ճմլում՝  
Ես այն եմ սիրում:

Է՞ն որ նայում ես սարերի լանջին  
Պուտերի խուօքն է կարմրին տալիս,  
Լսում ես ջահէլ արտերի միջին  
Արտուտի ազատ կանչը թնդալիս,  
Եւ այդ յաղթական ցնծալի կանչին  
Տեսնում ես նորեկ ընկեր-թռչուններ  
Արձագանքում են, տալիս ողջոյններ  
Ազատ եթերում՝  
Ես այն եմ սիրում:

Է՞ն որ այդ սրտիդ գոհունակ ժամին  
Տեսնում ես մէկ էլ հիւսիսի կողին  
Շողաց մի փայլակ - հետքից էլ խրոխտ  
Հեռու ներդաշնակ մի անուշ որոտ.  
Ուր հոգիդ նոյնպէս թնդում է, զգում,  
Որ այդ որոտից անձրև է գալու,  
Օդը մաքրելու ու մեզ բերելու  
Յանկալի գարուն՝  
Հենց այն եմ սիրում...

## ՄԻՒԱ ՅԽԱԿԱՅԱ - ԻՆ

(Եւ և է բ)

Կոկօններս էր, որ աւի այն ջահելներին,  
Այժմ էլ փուած վարդս նւէր մեր ծերերին.  
Ծծրերին ժիր կեանքի կուռմ բովւած շարքեր,  
Որոնց գործը հիացք բերող մի հրաշք էր.

Կեանքը նրանք չգարձուցին հեշտուն վայելք,  
Կեանքի ամեն ցանց ու հիւսրից դտան մի ելք.  
Ու թէ այսօր բանւորն է իր տէրը օրի՝  
Այդ էլ շնորհիւ մեր փորձւած ծեր առիւծների:

Նրանք նման հսկա կաղնու յաղթ գագաթին,  
Նրանք նման հեղեղ բերող գարնան գետին,  
Նրանց կեանքը չէր անխմաստ ու անհամբոյր,  
— Բուրող վարդը չորացած էլ տալիս է բոյր...

## ԿՈՄՄՈՒՆԱՐԻ ՄԱՀԸ

(Ա. Շ.-ի յիշատակին)

Ծաղիկների մի մեծ դաշտ էր —  
     Կարմիր և կանաչ,  
 Որ փռւել էր աչքիս առաջ.  
 Տանում էին թաղելու մեր լաւ ընկերոջ,  
 Որ ընկել էր վառ հասակում ծաղիկ, բողբոջ:  
 Տիմար ու բութ այն դաշնակի  
 Սև գնդակն էր նրան շանթել...  
 Այն երաժիշտների հիմնն էր,  
 Ողողել էր պարզուն եթեր.  
 Եւ ալ, կարմիր զրօշներով  
 Ալ շիրիմը սլսակի պէս շըջապատել,  
 Յանկարծ լուեց «Խնտերնացիոնալ»...  
 Եւ այդ խրոխտ երգի միջից  
 Կարծես ծլեց ջահել մի ձայն,  
 Նոյնքան հաստատ ու համոզուն,  
 Նոյնքան յստակ ու երազուն:  
 Նա ասում էր՝ նայէք սրա  
 Վեհ ճակատին. այս թարմ սողին  
 Փայլուն, կարմիր աստղի նման  
 Լոյս է տալիս ինչպէս արփին:  
 Մինչ տմարդի դաշնակն այն  
 Կարծել է թէ իր դաւազիր  
 Հարւածներով եթէ զարկեց կոմմունարին:  
 Սև օր կապեց մեր լոյս օրին:  
 Բթամիտը կարծել է թէ մարդ սպանեց,

Բայց չիմացաւ, որ մի՛ մահով  
 Հազարների ոտքի հանեց...  
 Նզնվը նրան, հէյ, ընկերներ,  
 Մարդասպանին արհամարանք,  
 Սրան թաղենք և ապա մեր  
 Անշեղ գծած ճամպով գնանք...  
 Ու որոտաց թաղման քայլերգ,  
 Սրա ճառին յետենեց երգ.  
 Տղամարդ, կին - կոմմունարներ  
 Վառւած սրտով, ոնց հրկիզներ,  
 Շիրմի հողում ցանում էին կուի սերմեր.  
 Մինչ ալ-կարմիր դրօշները  
 Փրփռալով թեթև քամուց՝  
 Կարծես նոյնպէս ճառում էին,  
 Կարծես նոյնպէս երգում էին  
 Խրոխտ ու վէս, խրոխտ ու վէս,  
 Մարդ չեն կորցրել ջահէլ, կարծես:  
 Եւ արեր փայլուն կայտառ,  
 Նոյնքան կարմիր, նոյնքան պայծառ,  
 Իր երգովն էր ձուլւել մեղ հետ,  
 Նա էլ կարծես դարձել պօէտ:  
 Մի-մի բուռ հող ձեռքերս առած  
 Լուռ ծածկեցինք նրա երես,  
 Բուան հողով — ծաղիկ ցանած  
 Ջահէլ-ջիւան կոմմունարի դամբարանին  
 Ու... հեռացանք նոյնքան լուռ, վէս...

## ԴԱՇՆԱԿԸ ԸՆԿԱՌԻ...

Դաշնակը ընկառւ... և բռնակալի դղեակը փլւեց,  
Նա՝ որ երեսուն և աւել տարի հայ արիւն կլլեց,  
Նա՝ որ երեսուն և աւել տարի չար ոգու նման  
Իր շուրջը փոեց մահ ու գերեզման.

Հալածեց թափը Մեծ գաղափարի—  
Նորեկ Աշխարհի,  
Բանաերով ցանցեց նոր սերուղների  
Երթը վիթխարի,  
Ու վերջին ժամին, երբ մահն էր զգում՝  
Զեռքերը լւաց կարմիր արիւնով կոմմունարների,

Դաշնակը ընկառւ... տանում՝ ենք հիմա  
Նրան թաղելու.  
Նրա դադաղը շինել ենք ահա  
Ցաղթ կամարների այն տախտակներից,  
Որի տակերից  
Երբեմն զոռող դաշնակն էր անցնում  
Եւ մահ տարածում...

## ՊՈՌՆԻԿՆ ՈՒ ԿՈՅԱԾ

(Ա.Լ.ԵԳՈՐԻԱ)

(Նույր զբաց մենչեփկներին)

Պոռնիկը մեղկ հանդիպելով մի օր կոյսին,  
 Ասաց, աղջի, շատ եմ լսել ես քո մասին.  
 Ապրում ես մէն, անմատչելի, հպարտի պէս,  
 Շորդ պատռած ինքու էլ սոված աղքատի պէս:  
  
 Մինչ ահա, տես, դլխարկ ունիմ ես ջայլամի,  
 Փորս միշտ կռւշտ, թըռվում եմ, ինչպէս քամի.  
 Ամենայն օր գւարճանում, ուրախանում  
 Ազատ, անհոգ, բանկէտներում, թէ դռխանում:  
  
 Երծքիս ռսկին, տես, այն Զօնիցն եմ ստացել,  
 Այս զոհարն էլ փախչող Հանսից ինձ մնացել.  
 Տաճիկ փաշան օր ու գիշեր տարել քէֆի,  
 Իտալացին դգեստ կարել ինձ շլէյֆի:  
  
 Եւ կոյսը մեր պատասխանում է պոռնիկին.  
 Դեռ խօսում ես, չես ամաչում, լաշմո դու կին,  
 Այն սիլինի, ծախւի քեզ պէս ամեն մէկին,  
 Որ չունենայ և զարդարանք, և հացի զին:  
  
 Ես աղքատ եմ, շորս պատռած, ինքս էլ սոված,  
 Բայց մատներիս կոշտերովն եմ ապրել սովրած.  
 Իմ զրկանքը կըվերջանայ այսօրւանից,  
 Քոնք, թշւառ, սկսւելու է հենց վաղւանից.

## ԱՆՀՈՒՆ ԾԱԻԱԼՈՎ

(Պ. Վելինբերգի)

Անհուն ծաւալով պարզել է իմ դէմ  
իմ հին բարեկամ — ծովը թախծաղէմ.  
Որպիսի կարող, հզօր, վիթխարի

Ոյժ կայ այդ անվերջ  
Յաղթ, արքայական տարածութեան մէջ,  
Ես եկայ այցի նրա դեղ ափին,  
Տառապած, մաշւած, կրծքով վլատակ,  
Կըւած թունալի կասկածանքների  
Եւ իմ խորտակւած երազ-յոյսերի

Շանը բեռան տակ:  
Ես եկայ յայտնեմ անյատակ ծովին,  
Որ վիճակիս հետ էլ չեմ բացում վէճ,  
Որ էլ կռւելու ոյժ չկայ իմ մէջ,  
Եւ որ բաղդիս հետ նման անարգին,

Հաշտւել եմ անդարձ...  
Բայց երբ իմ դիմաց ծովը դողդողաց

Անհուն ծաւալով,  
Եւ առիւծային անվեհեր թափով  
Կոհակ ալիքներ խրոխտ համերգով

Երգեցին յանկարծ՝  
Երգը քաջազօր վեհ ազատութեան,  
Երգը ահարկու հսկայ բնութեան,  
Որը կռւելով տիրում է կեանքին՝

Փոթորկեց իսկոյն, թնդաց իմ հոգին.

Եւ այնպէս, ամօթ, ամօթ զգացի

Ինքս ինձանից—

Իմ յոգնածութեան, անմիտ վհատման,

Մարած աւիւնիս, լքումի համար՝

Որ ես դատեցի՝ մինչև գերեզման

Անհաշտ բաղդիս հետ կռւել քաջարար:

Թօթափեցի ես սթափւած նորից

Կործանիչ, դատարկ

Մեղկ փոքրոգութեան բեռը խայտառակ.

Եւ իմ թշնամուն յամառ ու անպարտ

Մարտի կոչեցի առաջւայ նման,

Խրոխտ ու հպարտ:

Իսկ ծովի փրփուր ժիր ալիքները

Զարթնումի ոգուն, ազատ բնութեան

Արձագանքելով,

Վազում են առաջ, յոխորտում թափով

Աւելի արագ, աւելի խիղախ —

Եւ զովքը կեանքի և ազատութեան

Երգում են անվախ...

## ԱԶԳԱՅՑԻՆՆԵՐԻՆ

Ո.

Նման չեմ ես ձեր սիրելի պօէտներին,  
Չեր քուրմերին երգս օտար — մի խորթ հնչիւն.  
Ես չուզեցայ հաճոյանալ ձեր սրտերին,  
Այս առօրեայ, մեղկ ու թռւնոտ մղձաւանջում.

Ես երգեցի գործարանի սև աշխատանք,  
Եւ ճարճատւած պողպատ մէջքերն անիւի տակ.  
Ստեղծագործ հրաշքները կոշտ ձեռքերի,  
Յաղթանակող թափը նրանց վեհ պայքարի.

Մթափման երգ ես երգեցի լքւածներին,  
Եւ հրաւէր՝ պատրաստ լինել զարթնոց օրին.  
Ես երգեցի աշխարհ ցնցող խենթ փոթորիկ,  
Ռոտ ու շանթ տեղալուց յետ խաղաղ երկինք.

Եւ մարդկութեան հաւատալիքն ես երգեցի,  
Մաղիկներով ողջ պսակւած մի մեծ երթի...  
Ես երգեցի հուրը հալող ժանոտ բռնութեան  
Եւ հրապոյրը նորեկ եեանքի գեղեցկութեան...

Ո՞չ, նման չեմ ձեր սիրելի պօէտներին,  
Չեր քուրմերին երգս օտար, մի խորթ հնչիւն.  
Ես չուզեցայ հաճոյանալ ձեր սրտերին,  
Այս առօրեայ մեղկ ու թռւնոտ մղձաւանջում.

---

## ՔԻ՞Չ ԷԼ ԴԻՄԱՆԱՆՔ...

Յանուն նորածին մեր աղատ կեանքի—  
Եւ Հռկտեմբերեան Յեղափոխութեան—  
Քիչ էլ դիմանանք, քիչ էլ դիմանանք  
Սովի տանջանքին...

Քիչ էլ դիմանանք օձերի ջանքին,  
Որ խեղգում են մեզ սև օդակներով,  
Որ ուղում են մեզ սովամահ անել  
Շըջապահներով:

Քիչ էլ դիմանանք . . . մեռք ի՞նչ իմանանք,  
Վաղւան օրը մեզ չի՞ սղջունելու  
Խանդավառ յաղթի—Նորածին կեանքի  
Աւետումներով:

Քիչ էլ դիմանանք...  
Հիմբերը ամուր, դիրքերը ամուր  
Պահենք մեր շէնքի,  
Որոնք ամրացան արիւնքը տիրի  
Դարմիր շաղախով կարմիր տարերքի.

Դիրքերը ամուս լինի ամենքի,  
Որ ապագային գալոց սերնդի  
Մենք չարժանանանք նզովք անէծքին։

Յանուն նորածին մեր ազատ կեանքի  
Եւ հոկտեմբերեան Յեղափոխութեան՝  
Սովի տանջանքին քիչ էլ դիմանանք.  
Վաղը նոր արև մեզ պիտի ծագի,  
—Այդ շուտ կիմանանք։




# Յ Ե Ն Կ

	Երես
Երկու խօսք	2
Ցեղափոխութիւն	5
Վ. Ի. Լենին. ին	8
Մարգարէ եմ ես...	9
Աւետեաց երկրին	11
Ստեփան Շահումեան	13
Մեռան՝ չկորան...	14
Քսան-վեց էին...	16
Նահատակները	18
Պահակը	19
Ամբոխն իմ աշխարքը	20
Աշխատանքի երգը	22
Լուսաբացին	23
Համերդ	24
Դարբնի երգը	25
Հեռում էք ու տնքում	26
«Նոր առաւօտ» պօէմից	27
«Կարմիր ալիք» պօէմից	33
«Հաւասարութիւն» պօէմից	35
Կարմիր գարնան	41

Մաքառման ժամին	42
Մայիս-մէկեան երդ	43
Ես ձեզ ասում եմ...	44
Քաղաքը	45
Աէլֆերը	48
Օտարն ու հարազատը	49
Ես այն եմ սիրում	51
Միխա Ցխակայա-ին	53
Կոմմունարի մահը	54
Դաշնակը ընկաւ	56
Պռնիկն ու կոյսը	57
Անհուն ծաւալով	58
Ազգայիններին	60
Քիչ էլ դիմանանք	61

---



2831

Վրաստանի Սոցիալիստ. Խորհրդ. Հանրապետութիւն  
ՊԵՏՈՎԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԵԿ  
օրինակ

ԼՈՅԾ ԵՆ ՏԵՍԵԼ ԱՌԱՆՁԻՆ ԳՐՔԵՐՈՎ. ՀԵՂ  
ՀԵՏԵՒԵԱԼ ԳՈՐԾԵՐԸ

Խ Ե Ֆ Ե Ռ Ո Յ Ե

- 1). Բանաստեղծութիւններ, ա. զիրք սպառւած
- 2). Աշխատանքի երդեր
- 3). Նոր առաւօտ (պօէմ)
- 4). Բանաստեղծութիւններ, բ. զիրք
- 5). Յեղափոխ. երգեր, I և II հրատ.
- 6). Յիշատակին—(Հաւասարութիւն պօէմայով)
- 7). Կարմիր ալիք (պօէմ)
- 8). Յեղափոխական ըեմ—(ժողովածու)

Թ ա ր զ մ ա ն ա լ ա ն

- 9). Աղա-Նեղը, ա. պըրակ սպառւած
- 10).                  բ.                  ք.
- 11).                  վ.                  II հրատարակութիւն
- 12). Բանւորագարկի պօէզիայից, Ա. Գասեն
- 13). Դիթող հնչիններ, զրամատ. Էտիոդ
- 14). Երկու հեքեռթ, Մալոխի Գորկու
- 15). Գեղարվեստը կհանքի համար—Ա. Լունաչար.

